

ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԴՅՈՒՄ ԵՎ ԱԴՈՒՄ. ԶԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Վարդուշ Գյոզալյան

Բանալի բառեր՝ աղքատության մակարդակ, գործազրկություն, անվանական աշխատավարձ, մասնավոր հատված, պետական հատված:

Աղքատությունը բազմագործոն երևույթ է, որի ժամանակակից սահմանումները ևս հիմնված են դրա որպես բազմաչափ երևույթի ընկալման վրա:

Աղքատության հասկացությունն առաջին հերթին կապվում է նյութական հնարավորությունների սահմանափակության կամ եկամուտների անբավարարության հետ, որոնք անհրաժեշտ են գոյատևման նվազագույն բարիքներից օգտվելու համար: Սակայն այս մոտեցումը, որի շրջանակում առավելապես ընդգծվում է եկամտային գործոնը՝ հենքային ցուցանիշ ընդունելով մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մակարդակը, արդիական էր նախորդ դարի 60-ական թվականներին:

Արդեն 1970-ական թվականներին, աղքատության բնորոշման մեջ սկսեցին ներառվել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են հասարակության մեջ բարեկեցության ընդունելի մակարդակը և դրան համապատասխանությունը, ինչպես նաև արժևորվեց սոցիալական գործոնի դերը (առաջին անգամ առաջ է քաշվել Աշխատանքի միջազգային կազմակերպության զեկուլցում)՝ որպես կրթության, առողջապահության և այլ հիմնարար սոցիալական ծառայությունների հասանելիություն [1]:

Չետազայում աղքատության բնորոշման համատեքստում սկսեցին դիտարկվել նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են սոցիալական գործընթացներին մասնակցության հնարավորության սահմանափակությունը, հասարակական տարբեր դրսևորումների նկատմամբ խոցելիությունը և այլն (1980-ականներ), ինչպես նաև բարեկեցության ընկալման անձի սուբյեկտիվ մոտեցումը (1990-ականներ) [2]:

ՄԱԿ-ի ժամանակակից մոտեցման համաձայն՝ դիտարկվում են աղքատության երկու դրսևորումներ՝ նյութական և սոցիալական [3]:

Նյութական աղքատության շրջանակում տարբերում են բացարձակ և հարաբերական աղքատությունները:

Բացարձակ աղքատությունը վերաբերում է սոցիալապես ընդունելի կենսապայմաններից ցածր մակարդակում գտնվելուն և, սովորաբար, նկատի է առնում սննդով և այլ անհրաժեշտ ապրանքներով ապահովված չլինելը:

Հարաբերական աղքատություն ասելով՝ նկատի է առնվում նվազագույն կենսապայմաններ ունեցողների և առավել ապահովվածների կենսամակարդակների տարբերությունը:

Բացարձակ աղքատությունն իր հերթին դրսևորվում է ընդհանուր և ծայրահեղ աղքատության տեսքով: Վերջինիս բնորոշ է գոյատևման համար անհրաժեշտ նվազագույն պայմանների անհասանելիությունը կամ այլ կերպ ասած՝ աղքատության պարենային զոհից [4] ներքև գտնվելը, իսկ առաջինի տակ հասկանում են աղքատության ընդհանուր զոհից [5] ցածր գտնվելը:

Մեթոդաբանական վերոնշյալ հենքով է գնահատվում աղքատության մակարդակը ԴԴ-ում և ԱԴ-ում, որտեղ չնայած աղքատության որպես բացասական սոցիալական երևույթի ձևավորման համակարգային հիմքերը ընդհանրական էին (անցումային շրջանի ծանր մեկնարկային պայմաններ, պատերազմական իրավիճակ, շրջափակում, էներգետիկ ճգնաժամ և այլն), այդուամենայնիվ վերջին տարիներին դիտվում են նաև

* Հոդվածն ընդունվել է 05.12.2017:


Հոդվածը տպագրության է երաշխավորել տ.գ.թ., դոցենտ, Կ.Խաչատրյանը:

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններով պայմանավորված որոշակի գործոնային տարբերություններ:

Հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանական ընդհանրությունները թույլ են տալիս համեմատել ՀՀ և ԱՀ աղքատության մակարդակները նպատակ ունենալով վեր հանել երկու հանրապետություններում կենսամակարդակի այս կարևորագույն ցուցիչի հիմնական գործոնային առանձնահատկություններն ու տարբերությունները:

Գծապատկեր 1
Աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակները ՀՀ-ում և ԱՀ-ում
2014-2016թթ. [6]



Գծապատկեր 1-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ դիտարկվող ժամանակահատվածում աղքատության ընդհանուր մակարդակը ավելի ցածր է եղել ԱՀ-ում, որտեղ միևնույն ժամանակ դիտվել է ծայրահեղ աղքատության զգալիորեն ավելի բարձր մակարդակ, քան ՀՀ-ում:

Եթե ծայրահեղ աղքատությունը ԱՀ-ում դիտարկենք՝ ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի, ապա ուշագրավ է դառնում այն հանգամանքը, որ 2015թ. տվյալներով ԱՀ-ում այս ցուցանիշը քաղաքներում կազմել է 9.8%, գյուղերում՝ 2.8%, մինչդեռ պատկերը տրամագծորեն փոխվել է 2016թ.՝ համապատասխանաբար 2.6 % և 9.5% ցուցանիշներով [7]: Այսպիսի տեղաշարժը բացատրվում է առաջին հերթին 2016թ. ԱՀ-ում գյուղացիական տնտեսություններում զբաղվածների կրճատմամբ (2015թ. 5.6 հազ. մարդ, 2016թ.՝ 3.5 հազ.[8]), որը չի կոմպենսացվել ոչ գյուղատնտեսական բնույթի գործունեությունում զբաղվածության զգալի աճով (2015թ.՝ 48.0 հազ. մարդ, 2016թ.՝ 48.1 [9]): Դետևաբար, քաղաքային բնակավայրերում ծայրահեղ աղքատության կրճատումը պայմանավորված է եղել ոչ թե զբաղվածության աճով (վարձու աշխատողների թիվը քաղաքներում 2016թ.-ին 2015-ի համեմատ կրճատվել է, 27.8 հազ.-ից հասնելով 25.9 հազ.-ի [10]), այլ, մասնավորապես, քաղաքներին բնորոշ գործունեության ոլորտներում աշխատավարձի աճով (կացություն և հանրային սննդի կազմակերպում 2016-ին մախորդ տարվա համեմատ՝ 10.8%, տեղեկատվություն և կապ՝ 9.3%, պետական կառավարում, պարտադիր սոցիալական ապահովագրություն՝ 3.1%, սպասարկման այլ ծառայություններ՝ 5.3% [11]):

Ինչ վերաբերում է ՀՀ-ում ծայրահեղ աղքատության մակարդակին, ապա զրանցվել է կրճատման միտում, սակայն շարունակում է խնդրահարույց մնալ ծայրահեղ աղքատության խնդիրը փոքր և միջին քաղաքային բնակավայրերում (2008թ.՝ 2.8%, 2015թ.՝ 2.4%, 2016թ.՝ 2.1% [12]) հատկապես նախկին արդյունաբերական կենտրոններում: Իսկ գյուղական բնակավայրերում, չնայած այն հանգամանքին, որ ի տարբերություն քաղաքների, գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորության հաշվին բնակ-


ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

չության շրջանում ավազակություն է նվազագույն պահանջներին բավարարման որոշակի մակարդակ, հետևաբար ծայրահեղ աղքատության ավելի ցածր ցուցանիշ (2008թ.՝ 1.2, 2015թ.՝ 1.7%, 2016թ.՝ 1.4%), այդուամենայնիվ, ոլորտի ցածր արտադրողականության պայմաններում աղքատության հիմնախնդիրը շարունակում է մնալ առաջնային: Կայուն աշխատանքի բացակայության, գյուղատնտեսական աշխատանքներից ստացվող ցածր եկամտի և բարձր ռիսկայնության պայմաններում, հատկապես երիտասարդության շրջանում, ձևավորվել և խորանում է գյուղատնտեսությունից օտարանալու միտումը, ինչն էլ լրացուցիչ խթան է արտագաղթի աճի համար [13]:

ՀՀ համեմատ ընդհանուր աղքատության ավելի ցածր մակարդակը ԱՀ-ում կարելի է բացատրել տնտեսության կառուցվածքային մի շարք առանձնահատկություններով: Առաջին հերթին, ԱՀ-ում երկուհազարականներից ի վեր դիտվել է գործազրկության ավելի ցածր մակարդակ (տես գծապատկեր 2):

Գծապատկեր 2

Գործազրկության մակարդակի դինամիկան ՀՀ-ում և ԱՀ-ում 2001-2016թթ.




Թեև դիտարկվող 2014-2016թթ. ժամանակահատվածում գործազրկությունը ԱՀ-ում կտրուկ աճել է (ի հաշիվ տնտեսության զրեթե բոլոր ոլորտներում զբաղվածության կրճատման և միաժամանակ պաշտոնապես գրանցված գործազուրկների թվի կտրուկ աճի), այդուամենայնիվ ցուցանիշը դեռ ցածր է, քան ՀՀ-ում: Սակայն, դինամիկ պատկերը խիստ մտահոգիչ է, քանի որ ՀՀ-ում գործազրկության կրճատումը, այնուհետև՝ որոշակի կայունացումը ուղեկցվում է ԱՀ-ում ցուցանիշի կտրուկ աճով:

Միևնույն ժամանակ, ԱՀ-ում անվանական աշխատավարձը (նաև՝ իրականը) ևս - զիջում է ՀՀ-ում մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձին (տես գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Անվանական աշխատավարձի (ՀՀ դրամ) դինամիկան ՀՀ-ում և ԱՀ-ում 2001-2016թթ.




ՄԵՏՐՊՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Այս պայմաններում աղքատության համեմատաբար ցածր ցուցանիշը ԱԳ-ում բացատրվում է գործազրկության ցածր ցուցանիշի հետ մեկտեղ զբաղվածության, ինչպես նաև վարձու աշխատանքից ստացված եկամուտների կառուցվածքային էական տարբերությամբ (տես գծապատկերներ 4, 5):

Գծապատկեր 4

Զբաղվածությունն ըստ տնտեսության հատվածների (ընդհանուր զբաղվածության տոկոս) ՀՀ-ում և ԱԳ-ում 2014-2016թթ.




Գծապատկեր 4-ի տվյալները վկայում են, որ ՀՀ-ում և ԱԳ-ում նկատվում է զբաղվածության բաշխվածության տրամագծորեն հակառակ պատկերը. ՀՀ-ում զբաղվածության առյուծի բաժինն ընկնում է մասնավոր հատվածին, մինչդեռ ԱԳ-ում վարձու աշխատողների ավելի քան 70%-ը զբաղված է պետական հատվածում: Սա, անշուշտ, իր օբյեկտիվ պատճառներն ունի, քանի որ չլուծված հակամարտության գոտի լինելու փաստը խոչընդոտում է լրացուցիչ, հատկապես, օտարերկրյա ներդրումների ներհոսքը ԱԳ տնտեսություն:

Միևնույն ժամանակ, ԱԳ-ում միջին ամսական աշխատավարձը ոչ պետականի համեմատ ավելի բարձր է պետական հատվածում (տես գծապատկեր 5), ինչն էլ իր հերթին ավելի է մեծացնում պետական մարմիններում աշխատելու գրավչությունը:

Գծապատկեր 5

Միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ-ում և ԱԳ-ում ըստ տնտեսության հատվածների 2014-2016թթ.



Ընդհանրացնելով, կարող ենք նշել, որ վերջին տարիներին աղքատությունը դեռևս շարունակում է առանցքային սոցիալական հիմնախնդիրը մնալ թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում: ԱՅ-ում հատկապես մտահոգիչ է ծայրահեղ աղքատության աճի միտումը, մասնավորապես գյուղական բնակավայրերում, որտեղ ոչ գյուղատնտեսական բնույթի աշխատատեղերի սահմանափակությունը և գյուղատնտեսությունից ստացվող ցածր եկամուտները չեն ապահովում նվազագույն պահանջմունքների բավարարման անհրաժեշտ մակարդակ: Լուրջ խնդիր է նաև մասնավոր հատվածում աշխատավարձի ցածր մակարդակը, ինչը կարող է կարգավորվել միայն այս հատվածում ներդրումների աճի հաշվին:

ՀՀ-ում շարունակում է առաջնային մնալ գործազրկության հիմնախնդիրը, որը աղքատության կայուն բարձր մակարդակի հիմնական գործոն է: Թեև ՀՀ-ում մասնավոր հատվածում աշխատանքն ավելի զրավիչ է՝ ի հաշիվ բարձր աշխատավարձի, սակայն այստեղ էլ խնդիրը հանգում է որակյալ մասնագետների առաջարկի սակավությանը, առավել ևս, աղքատ բնակչության շրջանում, ուր առկա են բարձրագույն կրթության հասանելիության և այլ սոցիալական հիմնախնդիրներ:

Այսպիսով, երկու հանրապետություններում աղքատությունը և դրա տարածքային տարբերությունները բազմաշերտ և բազմագործոն համակարգային խնդիրներ են, որոնց լուծումը հնարավոր է առաջին հերթին տնտեսության կայուն և շարունակական աճի պայմաններում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Maxwell S., The Meaning and Measurement of Poverty, Overseas Development Institute Poverty Briefing, February 3, 1999.
2. Տե՛ս Գյոզալյան Վ., Սոցիալական քաղաքականություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2017, էջ 195:
3. Տե՛ս United Nations Development Programm (UNDP). “The Commitmentsto Poverty Reduction.” in Overcoming Human Poverty: UNDP Poverly Report. UNDP, 2000, էլեկտրոնային ռեսուրս՝ <http://www.undp.org/povertyreport/exec/english.html><http://www.undp.org/povertyreport/chapters/chap1.html>
4. Ըստ ՀՀ ԱՎԾ և ԱՅ ԱՎԾ կողմից կիրառվող մեթոդաբանության՝ աղքատության պարենային գիծն այն նվազագույն պարենային զանբյուրի արժեքն է, որը բաղկացած է 106 հիմնական սննդատեսակներից և ոչ ալկոհոլային խմիչքներից ունի 2332 կկալ օրական մեկ շնչի հաշվով էներգետիկ արժեք, հիմնված է չափահասին համարժեք սպառման 2-4-րդ դեցիլային սպառման համամասնությունների վրա:
5. Նվազագույն պարենային զանբյուրի արժեքը՝ վերահաշվարկված ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների վրա կատարվող ծախսերի գործակցով, ծառայում է՝ որպես նվազագույն սպառողական զանբյուր կամ աղքատության ընդհանուր գիծ:
6. Այս և հաջորդող բոլոր գծապատկերները կազմվել են հեղինակի կողմից՝ ՀՀ ԱՎԾ և ԱՅ ԱՎԾ տվյալների հիման վրա:
7. Տե՛ս ԼԴՀ սոցիալական պատկերը և աղքատությունը. վիճակագրական-վերլուծական զեկույց, Ստեփանակերտ 2017, էջ 27:
8. Տե՛ս ԼԴՀ վիճակագրական տարեգիրք 2017, Ստեփանակերտ , 2017, բնակչության զբաղվածություն, էջ 63:
9. Տե՛ս նույն տեղում:
10. Տե՛ս նույն տեղում:

11. Տե՛ս ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2017, բնակչության կենսամակարդակ և սոցիալական ոլորտ., էջ 79-80:
12. Տե՛ս ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան, 2017, էջ 42:
13. Տե՛ս Գյոզալյան Վ., նշվ. աշխ., էջ 207:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Աղքատությունը ՀՀ-ում և ԱՀ-ում. համեմատական վերլուծությունը
Վարդուշ Գյոզալյան

Հոդվածի շրջանակում իրականացված վերլուծության արդյունքում վեր է հանվել, որ ԱՀ-ում, ՀՀ համեմատ, ավելի ցածր է ընդհանուր աղքատության մակարդակը, ինչն ապահովվում է հիմնականում ի հաշիվ համեմատաբար ցածր գործազրկության և պետական հատվածում զբաղվածության ու անվանական աշխատավարձի բարձր մակարդակների: Միաժամանակ, ԱՀ-ում ավելի բարձր է ծայրահեղ աղքատությունը:

Երկու տնտեսություններում էլ աղքատությունը շարունակում է մնալ առաջնային սոցիալական խնդիր, որի լուծումը պետք է դիտարկել շարունակական ներդրումների և տնտեսական աճի համատեքստում:

РЕЗЮМЕ
Проблема бедности в РА и АР: сравнительный анализ
Вардуш Гезалян

***Ключевые слова:** уровень бедности, безработица, номинальная заработная плата, частный сектор, государственный сектор.*

В результате экономического анализа, проведенного в рамках статьи, было выявлено, что в АР сформировался сравнительно низкий уровень общей бедности, чем в РА, что обеспечивается за счет сравнительно низкого уровня общей безработицы и высокой занятости и заработной платы в государственном секторе. Одновременно в АР по сравнению с РА более остро проявляется проблема крайней нищеты.

В обеих экономиках бедность продолжает оставаться главной социальной проблемой, решение которой должно рассматриваться в контексте непрерывных капиталовложений и экономического роста.

SUMMATY
Poverty in RA and AR: Competitive Analysis
Vardush Gyozyalyan

***Key words:** Poverty level, unemployment, nominal wage, private sector, government sector.*

In the framework of author's economic analysis there was revealed, that in AR the level of total poverty is lower, then in RA, as a result of rather low level of overall unemployment and high wages and employment in government sector. In the same time in AR the problem of abject poverty is shown more burning. IN both economies the poverty continues to be the main social problem, which solution must be regarded in the context of continuous investments and economic growth.